

**ԻՍՐԱՅԵԼԻ ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ**

Հրեական Քնիսսէտի որոշմամբ, Կրօնից նախարարութեան լուծարքին հետեւանելով, 2004 տարուոյ շեմին ոչ-հրեայ կրօնական համայնքներու հարցերու նկատառումը յանձնուեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան: Այդ առթիւ Ներքին Գործոց Նախարարն իր անդրանիկ պաշտօնական այցելութիւնը տուաւ Երուսաղէմի պատմական եկեղեցիներու կրօնապետներուն:

Երկուշարքի, Յունուար 12ին Ներքին Գործոց Նախարար Աւրա'ամ Բորագն իր աշխատակիցներով պաշտօնապէս անդրանիկ այցելութիւնը տուաւ Հայոց Պատրիարքարան: Կէսօրին Նախարարը դիմաւորուեցաւ Վանքի մուտքին եւ առաջնորդուեցաւ դէալի Ա. Յակոբ Մայր Տաճարը, ուր Արիս Եպս. Շիրվանեան եւ Աւագ Թարգման Գուսան Վրդ. Ալեանեան տուին պատշաճ բացատրութիւններ: Այնուհետև, հիւրերը բարձրացան Պատրիարքարան:

Հիւրասիրութիւն տեղի ունեցաւ Պատրիարքարանին սրահներէն մէկուն մէջ, ուր ներկայ էին Պատրիարք Սրբազնը, Լուսարարապետ Սրբազնը, Արիս եւ Սեւան Սրբազնները, եւ Տնօրէն ժողովոյ անդամները:

Պատրիարք Սրբազն Հայրը շնորհակալութիւն յայտնեց ընձեռուած առիթին համար, եւ ներկայացուց Պատրիարքարանը եւ Հայոց Վանքը յուզող կարգ մը հարցեր, զորս վերջին տարիներուն կը դիմագրաւէ Պատրիարքարանը: Այդ ընթացքին հիւրերու ուշադրութեան յանձնուեցաւ «Լուսահանութեան» հարցը եւ ներկայացուեցան կարգ մը Ֆերմաններ: Ունկնդրումէն ետք, Պրն. Բորագն իր փոխադարձ գոհունակութիւնն արտայայտեց ցուցաբերուած հիւրասիրութեան համար, եւ հաւաստիացուց թէ պիտի ընէ իր կարելին՝ ներկայացուած կացութեանց հետ կապուած հարցերը բարելաւելու ուղղութեամբ: Պատրիարք Սրբազն Հայրը Պրն. Նախարարին յանձնեց Հայ Մշակոյթի եւ Եկեղեցւոյ գանձերը ներկայացնող երկու գիրքեր:

Ցաջորդ օրն արդէն Հրեական մամուլը առանձնակիօրէն անդրադարձած էր Պատրիարք Սրբազնի ակնարկած հարցերուն:

Խսահակ Արդ. Մինասեան